


Նախնական հաստատված է

«ԷԷՀՕ» ՓԲ ընկերության խորհրդի
2026թ. մայիսի 27-ի նիստում
խորհրդի նախագահ

 **Ա.ԽԱԿԻԱՅԱՆ**

Հաստատվել է

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարար

_____ **Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆ**

« _____ » _____ 2026թ.

**«Էլեկտրաէներգետիկական համակարգի
օպերատոր» ՓԲ ընկերության**

**2025 ԹՎԱԿԱՆԻ
ՏԱՐԵԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

ԵՐԵՎԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- I. Տեղեկատվություն Ընկերության, նրա կառավարման մարմինների մասին**
- II. Արտադրական գործունեություն**
- III. Ֆինանսատնտեսական գործունեություն**
- IV. Աշխատանք և աշխատավարձ**
- V. Եզրափակիչ դրույթներ**
- VI. Հաշվապահական հաշվեկշիռներ**
- VII. Տեղեկանքներ**
- VIII. Տեղեկություններ խորհրդի անդամների մասին**

I.ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

անվանումը՝ հայերեն լրիվ	-	«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերություն
կրճապ	-	«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ
նուսերեն	-	Закрытое акционерное общество «Оператор электроэнергетической системы»
կրճապ	-	ЗАО «Оператор электроэнергетической системы»
անգլերեն լրիվ	-	«Electro power systems operator» Closed joint-stock company
կրճապ	-	«Electro power systems operator» CJSC
հասցեն՝	-	ՀՀ, 0009, Երևան, Արուսյան փողոց 27
հեռախոս՝	-	(+37410) 524725
ֆաքս՝	-	(+37410) 547317
էլ. փոստ՝	-	office@energyoperator.am
ինտերնետային կայք՝	-	www.energyoperator.am
հարկ վճարողի հաշվառման համարը	-	01547732
<i>«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲ ընկերության բանկային վավերապայմանները՝</i>		
«Արդշինբանկ» ՓԲԸ		
«Ադասյան» մասնաճյուղ		2474600497000000
«Արաբկիր» մասնաճյուղ		2471200469060000

Պեպ.ռեգիստրում գրանցման համարը և ամսաթիվը՝
27312003639, 05.11.2003թ., վկայական թիվ՝ 03 Ա 062403

Իրավակազմակերպական ձևը՝
Փակ բաժնետիրական ընկերություն

Ընկերության կորպորատիվ կառուցվածքը

ա) Բաժնետերերի ընդհանուր ժողով

բ) Խորհուրդ

գ) Խորհրդի հանձնաժողովներ (2024թ. ընթացքում չեն ստեղծվել)

դ) գործադիր մարմին:

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 3 450 241 482.5 դրամ, որը կազմում է 316 349 հատ հասարակ (սովորական) բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 10 906.440 ՀՀ դրամ անվանական արժեքով՝ հիմք Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի տվյալ հաշվի օպերատորի՝ «ԱՐՄԲՐՈԿ» ԲԲԸ-ի կողմից 2024 թվականի փետրվարի 20-ի դրությամբ տրված արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ցուցակ:

Բոլոր բաժնետոմսերը տեղաբաշխված են, պատկանում են Հայաստանի Հանրապետությանը, վճարված են նրա կողմից և կառավարվում են Հայաստանի Հանրապետության կառավարության և նրա լիազորված մարմնի՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՄԲ ԵՎ ՏՐՎԱԾ ԼԻՑԵՆԶԻԱՅՈՎ

ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ընկերության նպատակն է տնտեսական գործունեություն իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումը, որի համար իրավունք է տրված և պարտավորեցված էլեկտրաէներգետիկական համակարգում մատուցել էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայություն՝ հետևյալ գործառույթներով.

1. էլեկտրաէներգետիկական համակարգում կարճաժամկետ պլանավորում և կարգավարում.
2. էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատիվ կառավարում.
3. էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի զարգացման պլանավորում.
4. տարածաշրջանային էլեկտրաէներգետիկական համակարգերի հետ Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական համակարգի համատեղ աշխատանքի ապահովում.
5. էլեկտրաէներգետիկական համակարգում՝ համաձայն Լիցենզիայի պայմանների և Շուկայի կանոնների, իր օպերատիվ ենթակայության ներքո գտնվող Ռելեական պաշտպանության և Հակավթարային ավտոմատիկայի սարքվածքների նախադրվածքների հաշվարկում, առաջադրում և դրանց կատարման վերահսկում.
6. հաճախականության և փոխհոսքերի կարգավորման, հաշվեկշռման, ինչպես նաև համակարգային ծառայություններ մատուցելու համար նախատեսված տեղակայանքների պատրաստականության ստուգում.
7. էլեկտրաէներգետիկական համակարգում կրիտիկական (վթարային) իրավիճակներում էլեկտրամատակարարման սահմանափակումների ծրագրերի կիրառման վերաբերյալ որոշումների կայացում.
8. հաղորդման ցանցին միացվող նոր կամ վերակառուցվող էներգատեղակայանքներ և սարքավորումների հաղորդման ցանցին միացնելու

տեխնիկական պայմանների և միացման գործողությունների ծրագրի վերաբերյալ համաձայնության տրամադրում.

9. էլեկտրական էներգիայի (հզորության) միջպետական առևտրի խթանման և տարանցման ապահովման նպատակով համագործակցություն այլ երկրների համապատասխան կազմակերպությունների հետ.

10. Շուկայի կանոններով նախատեսված այլ գործառույթներ:

Լիցենզիայի պայմանների 5-րդ կետի 1-7-րդ ենթակետերով ամրագրված գործառույթները Լիցենզավորված անձն իրականացնում է բացառիկ իրավունքով:

Ընկերությունը կարող է զբաղվել օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակներով, ինչպես նաև լիցենզիայի (հատուկ թույլտվություն) առկայության դեպքում այլ գործունեությամբ:

«Վ» հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշմամբ, Ընկերությանը տրված լիցենզիայի գործունեության ժամկետը 2025 թվականին երկարաձգվել է մինչև 2030թ. դեկտեմբերի 9-ը:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

1. Բաժնետիրոջ ընդհանուր ժողով՝

Ընկերության կառավարման բարձրագույն մարմին.

Դ.Խուղաթյան - ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար, ընկերության բաժնետոմսերի կառավարման 100% լիազորությունները իրականացնող

Հաշվետու տարում՝ 2025թ. փետրվարի 10-ին, մարտի 31-ին, հունիսի 18-ին, հունիսի 20-ին, հունիսի 30-ին, հոկտեմբերի 31-ին և դեկտեմբերի 30-ին Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3 հասցեում տեղի է ունեցել Ընկերության արտահերթ ընդհանուր ժողովներ:

2. **Խորհուրդ՝** Ընկերության կանոնադրության 13 հոդվածը (13.1-ից 13.7 կետեր)՝ սահմանում է Խորհրդի բացառիկ և պատվիրակված իրավասությունները:

Խորհրդի գործունեությունը

2025թ. ընթացքում Խորհուրդը գումարել է 5 խորհրդի նիստ՝ որոնք տեղի են ունեցել փետրվարի 7-ին, մարտի 26-ին, մայիսի 23-ին, հունիսի 20-ին և հոկտեմբերի 29-ին: Նիստերը անց են կացվել՝ մեկը առկա ձևաչափով, հինգը՝ հեռակա քվեարկության միջոցով:

Գործադիր մարմին

Ընկերության գործադիր մարմինը բաղկացած է մեկ՝ գլխավոր տնօրենի պարտականությունները կատարողից՝ Միքայել Գեորգիի Պիրադյան:

2025թ. Ընկերության ներքին աուդիտ իրականացնող անձ և կորպորատիվ քարտուղար չի նշանակվել:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՏԵՂԾՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության Կառավարության 2003թ. մայիսի 2-ի «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» և «Էներգա-կարգաբերում» փակ բաժնետիրական ընկերություններ ստեղծելու մասին» N779-Ա որոշման 1 կետի ա) ենթակետի պահանջներին համապատասխան ստեղծվել է «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերություն:

Նույն որոշման 6-րդ կետի համաձայն «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի կառավարման լիազորությունները վերապահվել են հետևյալ պաշտոնատար անձանցից յուրաքանչյուրին քվեարկող բաժնետոմսերի ընդհանուր թվի 1/5 չափով.

Հայաստանի Հանրապետության վարչապետ

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար

ՀՀ էներգետիկայի նախարար

ՀՀ արդարադատության նախարար

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետ:

«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲ ընկերության հիմնադիր ժողովը տեղի է ունեցել 2003թ. հոկտեմբերի 30-ին, որի որոշման 1-կետով հաստատվել է «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲ ընկերության ստեղծումը:

ՀՀ կառավարության 2003թ. նոյեմբերի 6-ի «ՀՀ էներգետիկայի ոլորտի պետական ընկերությունների 2003–2007 թվականների ֆինանսական առողջացման ծրագրի ու 2003–2007 թվականների ֆինանսական հոսքերի կանխատեսումների և մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N1694-Ն որոշման 2-րդ կետի պահանջներին համապատասխան Հայաստանի Հանրապետության

սեփականությունը հանդիսացող Ընկերության բաժնետոմսերի լիազորությունները վերապահվել է Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարին:

Ընկերության կանոնադրությունը Իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվել է 2003թ. նոյեմբերի 5-ին:

ՀՀ բնական մենաշնորհների կարգավորման հանձնաժողովի 2003թ. դեկտեմբերի 9-ի «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲ ընկերությանը էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայության մատուցման լիցենզիա տրամադրելու մասին» N87-Ա որոշման 1 կետով Ընկերությանը տրամադրվել է Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայության մատուցման լիցենզիա, որի պայմանները հաստատվել է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017թ. մայիսի 17-ի N163Ա որոշմամբ:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ընկերությունը իր կառուցվածքում ունի «Էներգակապ» մասնաճյուղ և մինչև 2023թ. հոկտեմբերի 5-ը գործել է Արցախի հանրապետության «Գանձասար օպերատոր» ՓԲ ընկերությունը:

Ընկերության տնօրինության տակ են գտնվում ներքոհիշյալ վարչական և արտադրական տարածքները.

ՀՀ Կառավարության 2003թ. մայիսի 2-ի «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» և «Էներգակարգաբերում» փակ բաժնետիրական ընկերություններ ստեղծելու մասին N779-Ա որոշման հավելված 1-ով փոխանցվել է շենք շինություն («Էներգակապ» մասնաճյուղ), որոնք սեփականության իրավունքով՝ 2005թ. հոկտեմբերի 18-ին, 1092.3 քառ. մետր մակերեսով, գրանցված են ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 3-6 մատյանի 000295 համարի տակ, քաղ. Երևան, Արաբկիր համայնք, Մալխասյանց փող. թիվ 2 հասցեում, այդ թվում՝ վարչական շենք, պահեստներ, ավտոտնակներ, ծածկեր, բենզալցակայան: Կադաստրի պետական կոմիտեում 2006թ.-ից քաղ.Երևան, Մալխասյանց 2 հասցեի 0.265 հա հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը՝ ՀՀ կառավարության 01.10.05թ. N199-Ն որոշման և ՀՀ հողային օրենսգրքի 23 հոդվածի պահանջների համաձայն, փոխանցվել է «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲ ընկերությանը:

2006թ. Ընկերության կողմից անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով զբաղեցրած հողամասի («Էներգակապ» մասնաճյուղ - 0.265 հա) նկատմամբ գրանցվել է սեփականության իրավունք, որը ակտիվների կազմում ներառելու և հաշվապահական ձևակերպումներ տալու վերաբերյալ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 2/3 1-5/3-3058, 07.03.06թ. պարզաբանմամբ որպես հետաձգված եկամուտ Ընկերությունը ձևակերպել է 105.979 մլն դրամ: Նշված եկամուտը պետք է ճանաչվի որպես եկամուտ սիստեմատիկ և ռացիոնալ հիմունքով, տվյալ հողամասի վրա կառուցված շենքերի, շինությունների միջին կշռված

մնացորդային օգտակար ծառայության ժամկետի ընթացքում և վերագրվի հաշվետու ժամանակաշրջանի եկամուտներին:

ՀՀ կառավարության 2009թ. օգոստոսի 13-ի «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերությանը գույք հանձնելու մասին» N924-Ա որոշմամբ «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին ամրացված՝ Երևան քաղաքի Աբովյան 27 հասցեում գտնվող՝ 3436.95 քառ. մետր մակերեսով ու 2327154 հազ.դրամ գնահատված արժեքով շենքը և դրա սպասարկման ու օգտագործման համար հատկացված 0.13639 հեկտար հողատարածքը ներդրվել է «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալում: ՀՀ Կառավարության 2010թ. փետրվարի 18-ի N150-Ա որոշմամբ «3436.95 քառ. մետր մակերեսով» բառերը փոխարինվել են «3536.95 քառ. մետր մակերեսով» բառերով, իսկ «2327154» թիվը՝ «2343603»:

2010թ. ապրիլի 12-ին սեփականության իրավունքով՝ 3536.95 քառ. մետր մակերեսով շենքը և 0.13639 հեկտար հողատարածքը՝ գրանցված են ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 010063-21 մատյանի 00210 համարի տակ, քաղ. Երևան, Կենտրոն համայնք, Աբովյան փող. թիվ 27 հասցեում:

ՀՀ կառավարության 2017թ. դեկտեմբերի 7-ի «ՀՀ կառավարության 25.02.2010թ. N182-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու և «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲ ընկերության կանոնադրական կապիտալում գույք ներդնելու մասին» N1557-Ա որոշման համաձայն, ք.Երևան, Ծովակալ Իսակովի 50/21 հասցեում 0.25555 հեկտար մակերեսով հողամասը 38700.0 հազ.դրամ շուկայական արժեքով ներ է դրվել «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲ ընկերության կանոնադրական կապիտալում՝ Պահուստային կարգավարական կենտրոն կառուցելու նպատակով, որը համապատասխան գրանցում է ստացել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի

պետական կոմիտեում, ինչպես նաև համապատասխան գրանցում է ստացել ՀՀ պետական ռեգիստրում:

«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲ ընկերության խորհրդի 19.12.2019թ. նիստի «Արցախի Հանրապետությունում ընկերություն ստեղծելու վերաբերյալ» որոշման հիման վրա, 2021թ. հոկտեմբերի 10-ին խորհուրդը հաստատել է Արցախի Հանրապետությունում գործող «Գանձասար օպերատոր» ՓԲ ընկերության կանոնադրությունը, որը Արցախի Հանրապետության օրենքներին համապատասխան գրանցվել է ԱՀ պետական ռեգիստրում՝ որպես «Գանձասար օպերատոր» ՓԲ ընկերություն, ԱՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի կողմից «Գանձասար օպերատոր» ՓԲ ընկերությանը տրվել է գործունեության լիցենզիա և սահմանվել է սակագին: «Գանձասար օպերատոր» ՓԲ ընկերությունը իր գործունեությունը սկսել է 2022թ. հունվարի 1-ից:

Խորհրդի 24.12.2021թ. նիստում հաստատված «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲ ընկերության վարչակազմակերպական կառուցվածքում ընդգրկվել է Արցախի Հանրապետության «Գանձասար օպերատոր» ՓԲԸ-ն, որպես առանձին կառուցվածքային ստորաբաժանում:

Խորհրդի 2023թ. հոկտեմբերի 5-ի նիստում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արցախի Հանրապետության տարածքը Ադրբեջանի Հանրապետության կողմից օկուպացվելուց հետո Արցախի էլեկտրամատակարարումը 24.09.2023թ.-ից իրականացվում է Ադրբեջանի էներգահամակարգից, իսկ օպերատորի գործառույթները իրականացվում են Ադրբեջանի օպերատորի կողմից, որոշվել է «Գանձասար օպերատոր» ՓԲ ընկերությունը հանել «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲ ընկերության հաշվեկշռից և կառուցվածքից:

II. ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅՈՒՆ

2025թ. ընթացքում Ընկերությունը, իրականացրել է օպերատորի ծառայության մատուցման լիցենզիայով նախատեսված բոլոր գործառույթները՝ ապահովելով ՀՀ էներգահամակարգի անվտանգությունն ու հուսալիությունը: Տարվա ընթացքում Կենտրոնական կարգավարական ծառայության աշխատակիցների մեղքով վթարներ չեն արձանագրվել:

Հանդիսանալով էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի մասնակից, «ԷԷՀՕ» ՓԲ ընկերությունը իր փոխհարաբերությունները շուկայի այլ մասնակիցների հետ վարում է «էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի և էլեկտրաէներգետիկական համակարգի լիցենզավորված այլ անձանց փոխհարաբերությունների կարգը հաստատելու մասին» ՀՀ ՀԾԿՀ 2008թ. հուլիսի 2-ի N347-Ն որոշմանը համապատասխան: «ԷԷՀՕ» ՓԲ ընկերությունը գործունեության ոլորտում կարևոր տեղ է հատկացված նաև ՀՀ ՀԾԿՀ «ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալիության և անվտանգության ապահովման կանոններ» 2004թ. դեկտեմբերի 24-ի N176-Ն որոշմամբ սահմանված դրույթների իրագործմանը:

Ընկերությունը, լիցենզիայի պայմաններին համապատասխան, տարվա ընթացքում մշակել և արտադրող, բաշխող և տեղափոխող ընկերություններին է տրամադրել հրահանգներ:

Տեխնիկական բարձր մակարդակով և փոխադարձ վստահության մթնոլորտում է ապահովվում Իրանի Իսլամական Հանրապետության «Թավանիր» ընկերության ազգային կարգավարական կենտրոնի և Ընկերության կենտրոնական կարգավարական ծառայության կարգավարների միջև փոխհարաբերությունների և 220կՎ Ահար-1, Ահար-2 միջպետական էլեկտրահաղորդման գծերի օպերատիվ կառավարման վերաբերյալ կնքված համաձայնագրով նախատեսված պահանջների կատարումը: Ըստ անհրաժեշտության վերամշակվել են արդեն գործողության մեջ գտնվող հրահանգները և տրամադրվել համապատասխան ընկերություններին:

Ընկերությունը սպասարկել է կապուղիներ, մալուխային և օդային կապի գծեր, ռադիո և այլ հատուկ կապի ու հեռուստամեխանիկայի սարքավորումներ և SCADA/կապ համակարգը, որն իր մեջ ներառում է՝

«Էներգակապ» մասնաճյուղը սպասարկել է.

1. Կապի թվային (IP) սերվերներ	- 6 հատ
2. Երկարատև ձայնագրման թվային (IP) սարք	- 3 հատ
3. Ցանցային դեկավարման համակարգեր (NMS)	- 5 հատ
4. Օպտիկական վերջնամասային սարքեր (OLTE)	- 54 հատ
5. Բարձր հաճախականության Սարքավորումներ (DPLC)	- 28 լրակազմ
6. ԱՀԿ Panasonic	- 11 հատ
7. Օպտիկամանրաթելքային ճոպան (OPGW)	- 1099.5 կմ
8. Օպտիկամանրաթելքային մալուխ (OPAC)	- 41.382 կմ
9. Օպտիկամանրաթելքային մալուխ (ADSS)	- 39.324 կմ
10. Մալուխային կապի պղնձյա գծեր	- 3.3 կմ
11. Էներգասնուցման անխափան սարքեր՝ <ul style="list-style-type: none">• լիցքավորման ագրեգատներ (Golero)• մարտկոցներ• շարժիչ գեներատորներ• 220Վ/48Վ լիցքավորիչներ• 48Վ/220Վ փոխակերպիչներ• 220Վ/48Վ փոխակերպիչներ• Անխափան սնուցման սաք (UPS) 40 կՎա• Էլեկտրասնուցման ռեզերվ ավտոմատ միացման համակարգ	- 17 հատ - 33 կոմպ. (174 հատ) - 16 հատ - 21 հատ - 30 հատ - 12 հատ - 3 հատ - 4 հատ
12. Դիզել գեներատոր 150 կՎա	- 1 հատ
13. Անալոգային հեռախոսային փոխակերպիչներ (Mediatrix)	- 38 հատ
14. Սկադա համակարգի 3-րդ մակարդակի ցանցային (L3) երթուղիչներ	- 14 հատ
15. Սկադա համակարգի 2-րդ մակարդակի ցանցային (L2) կոմուտատորներ	- 41 հատ
16. ՍԿԱԴԱ/ԿԱՊ համակարգի IP հեռախոսներ	- 316 հատ
17. ՍԿԱԴԱ/ԿԱՊ համակարգի Անալոգային հեռախոսներ	- 86 հատ
18. Ռադիոկայան FM 301-160	- 12 հատ
19. Ռադիոռելեական սարքավորումներ "Малютка"	- 6 հատ
20. Ռադիոսարքավորումներ «air fiber 5x»	- 10 կայան
21. Հակահրդեհային համակարգ փոխկապակցված արտակարգ իրավիճակների ճգնաժամային կենտրոնի կարգավարական կետի հետ	- 25 օբյեկտ

Օպտիկա-մալուխային ծառայություն

1. «Հարավային» ե/կ-ում «Հարավային-1,2» 110 կՎ ՕԳ-ների դիֆերենցյալ պաշտպանության (ԳԴՊ) չափումներ, թերության վերացում:
2. «Հրազդան 5»-ում օպտիկական մալուխների միացումների սխեմայի փոփոխություն:
3. Պահուստային կարգավարական կետում (ՊԿԿ) «Շահումյան 2» ե/կ-ՊԿԿ կապուղու վնասված ջիղի փոխարինում:

4. «ՀԱԷԿ» ՓԲԸ-ում «Անուշ» 110 կՎ ՕԳ-ի օպտիկամանրաթելքային մալուխների թերության վերացում:
5. «ՀԱԷԿ» ՓԲԸ-ում «Աշնակ»-1,2 110կՎ ՕԳ-ի օպտիկամանրաթելքային մալուխների թերության վերացում:
6. «Արարատ 2» ե/կ-ում «Արարատ-1,2» 110կՎ ՕԳ-երի և «Գետափ» 220 կՎ ՕԳ-ի ԳԴՊ - ների միացումներ:
7. «Լիճք» ե/կ-ից «Մասրիկ-1» ֆոտովոլտային կայանի օպտիկական կապուղու օպտիկամանրաթելքային մալուխի միացումներ «Լիճք» ե/կ-ում:
8. «Զովունի» ե/կ-ում և «Շահումյան-2» ե/կ-ում «Սեբաստիա» 220 կՎ ՕԳ-ի ռելեական պաշտպանության (ՌՊ) օպտիկական մալուխների միացումներ:
9. «Երևան» ԶԷԿ-ում վնասված օպտիկամանրաթելքային մալուխների օպտիկական միջանկյալ միակցիչների (patchcord) փոխարինում:
10. «Շահումյան -2» ե/կ-ում և «Զովունի» ե/կ-ում «Մաշտոց-1,2» 110 կՎ ՕԳ-ների ԳԴՊ- ների միացումներ:
11. «Զովունի» ե/կ - «Շահումյան-2» ե/կ - «Սեբաստիա» -220 կՎ ՕԳ-ի «վազող ալիք»-ի կապուղու միացումներ «Զովունի» և «Շահումյան-2» ե/կ-ներում:
12. «Զովունի» ե/կ - «Արզնի» ՀԷԿ - «Արգել» ՀԷԿ - «Առինջ» և «Հրազդան» 110 կՎ ՕԳ- երի ԳԴՊ կապուղու տրամադրում, «Զովունի» ե/կ-ում, «Արգել» ՀԷԿ-ում և «Արզնի» ՀԷԿ- ում օպտիկական միացումներ:
13. «Արարատ-2», «Մխչյան» 110 կՎ ՕԳ-ների թ5 հենարանի վրա կարճ միացման հետևանքով վնասված ամպրոպապաշտպան ճոպանում ներկառուցված օպտիկամանրաթելքային մալուխի (OPGW) ապամոնտաժում և մոնտաժում թ4-ից թ6 միջհենարանային հատվածում:
14. «Արարատ - 2» 110 կՎ ՕԳ-ի թ4 և թ6 հենարանների վրա օպտիկական միացման տուփերի (joint box) տեղադրում, օպտիկամանրաթելքային ջղերի միացումներ:
15. «Շահումյան-2» ե/կ-ում վնասված օպտիկական միջանկյալ միակցիչի (patchcord)-ի փոխարինում:
16. «Եղեգնաձոր» ե/կ - «Արարատ -2» ե/կ - «Գետափ» 220 կՎ ՕԳ-ի «վազող ալիք»-ի կապուղու տրամադրում, «Եղեգնաձոր» ե/կ-ում և «Արարատ»-2 ե/կ-ում օպտիկական մալուխների միացումներ:
17. «Երևան» ԶԷԿ - «Արարատ- 2» ե/կ- «Էրեբունի» 220 կՎ ՕԳ-ի ԳԴՊ կապուղու տրամադրում, օպտիկական մալուխների միացումներ:
18. «Զովունի» ե/կ - «Հրազդան» ԶԷԿ - «Սոլակ» - «Քաղսի» 110 կՎ ՕԳ-ով «վազող ալիք»-ի կապուղու տրամադրում, «Հրազդան» ԶԷԿ-ում և «Զովունի» ե/կ-ում օպտիկական միացումներ:
19. «ՀԱԷԿ» ՓԲԸ - «Արարատ -2» ե/կ «Արեգ» 220 կՎ ՕԳ-ով «վազող ալիք»-ի կապուղու տրամադրում, «ՀԱԷԿ» ՓԲԸ-ում և «Արարատ-2» ե/կ-ում օպտիկական միացումներ:
20. «Երևան» ԶԷԿ - «Արարատ-2» ե/կ - «Եղեգնաձոր» ե/կ օպտիկական վերջնամասային սարքի (OLTE) միացման զույգերի հաջորդաբար անջատում, աշխատանքի կասկածելի թերության վերացման նպատակով:
21. «Արարատ-2» ե/կ - «Երևան» ԶԷԿ - «Շահումյան -2» ե/կ - «Երևան» ՀԷԿ - «վազող ալիք»-ի կապուղու տրամադրում, նշված օբյեկտներում օպտիկական մալուխների միացումներ:
22. «Զովունի» ե/կ-ում նոր տեղադրված ՌՊ վահաններից օպտիկական մալուխների միացումներ:

23. «Ջովունի» ե/կ - «Հյուսիսային» ե/կ - «Քանաքեռ» ՀԷԿ, «Արաբկիր», «Գործարանային» և «Քանաքեռ» 110 կՎ ՕԳ-երի ԳԴՊ կապուղիների տրամադրում, օպտիկական մալուխների միացումներ:
24. «Գործարանային» 110 կՎ ՕԳ-ի թ6 հենարանի վրա տեղադրված օպտիկական մալուխի միացման տուփում վնասված օպտիկական մալուխի ջիղի վնասվածքի վերացում:
25. «Հյուսիսային» ե/կ-ում «Արաբկիր» 110 կՎ, «Գործարանային» 110 կՎ ՕԳ-ների ԳԴՊ-ի վնասվածքի վերացում:
26. «ՄԷԿ» գրասենյակ - «Քանաքեռ» ՀԷԿ հատվածում ինքնակիր ոչ մետաղական օպտիկական (ՕՄԻ(ՕՓԱԿ)) մալուխի տեղափոխում նոր տեղադրված հենարանի վրա, օպտիկական մալուխի (ՕՄԻ(ՕՓԱԿ)) միացման տուփի մոնտաժում, միացումներ (շինարարական աշխատանքների պատճառով տեղափոխվել էր նոր հենարան):
27. «ՄԷԿ» գրասենյակ - «Քանաքեռ» ՀԷԿ, «Գործարանային» 110 կՎ ՕԳ-ի թ6 հենարանի հատվածում (ՕՓԱԿ) տիպի մալուխի տեղափոխում նոր ուղեծրով, նորակառույց շենքերի տարածքից հանելու նպատակով:
28. «Արարատ-2» ե/կ-ից «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի հատվածի բոլոր միացման կետերում կորուստների նվազեցման նպատակով կապի մոնիտորինգ՝ օպտիկական թվային հաղորդիչ/ընդունիչ (SFP)-ների, օպտիկական միջանկյալ միակցիչների մաքրում:
29. «Լիճք» ե/կ - «Մասրիկ-1» ֆոտովոլտային կայան կապուղու վնասվածքի տեղը որոշելու նպատակով, չափումներ «Լիճք» ե/կ-ից:
30. «ՀԱԷԿ» ՓԲԸ - «Շահումյան-2» ե/կ - «Շահումյան -1» ե/կ- «ԲԷՑ» ՓԲԸ գրասենյակ-«Rostelekom»-ի կապուղու անջատումներ և ապամոնտաժում բոլոր նշված օբյեկտներում:
31. «ՄԷԿ» գրասենյակ - «Քանաքեռ» ՀԷԿ հատվածում ինքնակիր ոչ մետաղական օպտիկական (ՕՄԻ (ՕՓԱԿ)) տիպի մալուխին խանգարող ծառերի ճյուղերից ազատում, հետագա վնասվածքից խուսափելու նպատակով:
32. Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նոր շենք օպտիկամանրաթելքային մալուխի մոնտաժում, միացման տուփի տեղադրում, օպտիկական միացումներ:
33. «Ucom» -ի Մյասնիկյան պողոտայի օպտիկայի միացման տուփից հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (ՀԾԿԿ) նոր ադմինիստրատիվ շենք օպտիկամանրաթելքային մալուխի անցկացում ՀԾԿԿ-ի ադմինիստրատիվ շենքում օպտիկական միացման տուփի տեղադրում, օպտիկական միացումներ:
34. Հերացի փողոց - Ամառանոցային փողոց խաչմերուկի «TeamTelecom»-ի դիտահորում տեղադրված «ԷԷՀՕ» ՓԲԸ - «ՀԷՑ» ՓԲԸ կապուղու վնասված օպտիկական միացման տուփի փոխարինում, օպտիկամանրաթելքային մալուխի միացումներ:
35. «Սպանդարյան» ՀԷԿ - «Անգեղակոթ» ջրամբար օպտիկամանրաթելքային մալուխի չափումներ, վնասվածքի վերացում:
36. «Անգեղակոթ» ջրամբարից ռադիոհեռարձակման սարքի անտենա-օպտիկամանրաթելքային մալուխի մոնտաժում, օպտիկական ջիղերի միացումներ:
37. «Աշնակ-1,2» 220 կՎ ՕԳ-ի կապուղու վնասվածքի վերացում «Աշնակ-2» ե/կ-ում:
38. «Հրազդան» ՀԷԿ-ում վնասված օպտիկական միջանկյալ միակցիչի փոխարինում:
39. «Շահումյան-2» ե/կ-ում «TeamTelecom»-ի կապուղու կորուստները նվազեցնելու նպատակով չափումներ և օպտիկական թվային հաղորդիչ/ընդունիչների օպտիկական միջանկյալ միակցիչների մաքրում:

40. «Առինջ» - «Հրազդան» 110 կՎ ՕԳ-ի Կարենիս գյուղի մոտի օպիկական միացման տուփից «Ucom»-ի օպտիկական մալուխի միացում, կապուղու տրամադրում դեպի «Արգե» ՀԷԿ և «Հրազդան» ՀԷԿ:
41. «Զովունի» ե/կ-ից «ArpiNet»-ին տրամադրված կապուղու կորուստները նվազացնելու նպատակով չափումներ և օպտիկական թվային հաղորդիչ/ընդունիչների օպտիկական միջանկյալ միակցիչների մաքրում:
42. «Վանաձոր» ե/կ-ից օպտիկական մալուխի միացում:
43. «Աշնակ-1,2» 220 կՎ ՕԳ-ի թ83 հենարանի վրա տեղադրված օպտիկական միացման տուփից չափումներ, թերության վերացում և օպտիկական միացման տուփում ջիղերի վերամոնտաժում:
44. «Շահումյան-2» ե/կ-ում «Fnet»-ի նոր սարքին օպտիկական ջիղերի միացումներ:
45. «Մասրիկ-1» ֆոտովոլտային կապուղու վնասվածքի հետևանքով «Լիճք» ե/կ-ից նոր ջիղերի տրամադրում:
46. «ՀԷՅ» ՓԲԸ ադմինստրատիվ շենք մտնող ՕՄԻ մալուխի ապամոնտաժում, նոր ուղեծրով մոնտաժում:
47. «Անուշ» - «Աշտարակ» 110 կՎ ՕԳ-ների թ92 հենարանի վրա տեղադրված միացման տուփից «ArpiNet»-ին կապուղու տրամադրում, օպտիկական միացումներ:
48. «Շահումյան-2» ե/կ-ում «Աշտարակ» 110կՎ ՕԳ-ի օպտիկական բաժանարարից, «ArpiNet»-ին կապուղու տրամադրում, օպտիկական միացումներ:
49. «Հրազդան» ԶԷԿ բլոկային մասից ոչ բլոկային մաս օպտիկական կապուղու տրամադրում, օպտիկական միացումներ:
50. «Երևան» ՀԷԿ-ում «RetNet»-ի կապուղու ազդանշանների մակարդակի բարելավում, կորուստների վերացում:
51. «Լիճք» ե/կ-ում «ArpiNet»-ի կապուղու ջիղերի մաքրում, կորուստների նվազեցում, կապուղու վերականգնում:
52. «Հրազդան» ԶԷԿ-ում «Սոլակ», «Քաղսի» 110 կՎ ՕԳ-ների ԳԴՊ-ների նոր տեղադրված սարքերի օպտիկամանրաթելքային մալուխների միացումներ:
53. «Հրազդան» ԶԷԿ - «Հրազդան» ՀԷԿ «ՊՇԷԿ-1,2» 220 կՎ ՕԳ-ների ԳԴՊ-ների միացումներ և ստուգումներ:
54. Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նոր ադմինիստրատիվ շենքում օպտիկական սարքերի տեղադրում, օպիկական բաժանարարի մոնտաժում և միացումներ:
55. «Աշնակ» ե/կ - «Գյումրի-2» ե/կ հատվածի միացման տուփերում «Rostelekom»-ի կապուղու կորուստների նվազեցման աշխատանքներ:
56. «Քոնթուր Գլոբալ Հիդրո Կասկադ»-ի գրասենյակ - «Շինուհայր» ե/կ կապուղու վնասվածքի վերացում:
57. «Շինուհայր» ե/կ - «Սպանդարյան» ՀԷԿ կապուղու վնասվածքի վերացում:
58. «Երևան» ԶԷԿ - «Արարատ 2» ե/կ «Արեգ» 220 կՎ ՕԳ-ի «վազող ալիք»-ի կապուղու թերության վերացում:
59. «Երևան» ԶԷԿ - «Արարատ- 2» ե/կ - «Եղեգնաձոր» ե/կ -«Շամբ» ՀԷԿ կապուղու չափումներ, հայտնաբերված թերությունների վերացում, կորուստների նվազեցում:
60. «Շահումյան 2» ե/կ -«Ծիծեռնակաբերդ» ե/կ - «Երևան» ՀԷԿ «Կարմիր-1,2» 110 կՎ ՕԳ-ների ԳԴՊ-ների կապուղիների միացումներ:
61. «Սոլակ-Քաղսի» 110 կՎ ՕԳ-ներով «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ կապուղու վնասվածքի վերացում:

62. «Առինջ» - «Հրազդան» 110 կՎ ՕԳ-ների թ48 հենարանի միացման տուփից ԳԴՊ-ների կապուղու համար երկկողմանի օպտիկական միացումներ:
63. «Առինջ» - «Հրազդան» 110 կՎ ՕԳ-երի թ48 հենարանի միացման տուփում FNet-ի կապուղու կորուստների նվազեցում:
64. «Արգե» ՀԷԿ - «Հրազդան» ՀԷԿ հատվածում «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ կապուղու մեծ կորուստների պատճառով օպտիկական ջիղերի փոխարինում:
65. «Զովունի» ե/կ-ում «Մաշտոց-1,2» 110 կՎ ՕԳ-ների ԳԴՊ-ի վնասվածքի վերացում:
66. «Շինուհայր» ե/կ - «Շամբ» ՀԷԿ, «Որոտան- 2» 220 կՎ ՕԳ-ի ԳԴՊ-ի կապուղու ապահովում, «Շինուհայր» ե/կ-ում և «Շամբ» ՀԷԿ-ում օպտիկական միացումներ:
67. «Շինուհայր» ե/կ - «Սպանդարյան» ՀԷԿ- «Որոտան-1» 220 կՎ ՕԳ-ի ԳԴՊ կապուղու ապահովում, «Շինուհայր» ե/կ-ում և «Սպանդարյան» ՀԷԿ-ում օպտիկական միացումներ:
68. «Մեղրի-1,2» 220 կՎ ՕԳ-ի ԳԴՊ կապուղու ապահովում, «Շինուհայր» ե/կ-ում և «Ագարակ» փոխանջատման կետում օպտիկական միացումներ:
69. «Քանաքեռ», «Գործարանային» 110 կՎ ՕԳ-ների թ2 հենարանի վրա կայծակից վնասված (ՕՄԱՄ)-ի ապամոնտաժում և նոր (ՕՄԱՄ)-ի մոնտաժում թ2-ից թ3 միջհենարանային հատվածում:
70. «Քանաքեռ», «Գործարանային» 110 կՎ ՕԳ-ների թ2 և թ3 հենարանների վրա միացման տուփերի տեղադրում և միացումներ:
71. «Մարաշ» ե/կ - «Քանաքեռ» - ՀԷԿ - «ԲԷՏ» ՓԲԸ կապուղու տրամադրում օպտիկական միացումներ «Մարաշ» ե/կ-ում, «Քանաքեռ» ՀԷԿ-ում և «ԲԷՏ» ՓԲԸ ադմինիստրատիվ շենքում:
72. «Մեղրի-1,2» 220 կՎ ՕԳ-ի թ141 հենարանի միացման տուփից օպտիկական մալուխի միացումներ:
73. «Քոնթուր ԳլոբալՀիդրո Կասկադ» ՓԲԸ-ի ադմինիստրատիվ շենքի միացման տուփից օպտիկական մալուխի միացումներ:
74. «ՊՏ ՕՕ»-ում «Շամբ» 220 կՎ ՕԳ-ի թ4 հենարանի միացման տուփից օպտիկական մալուխի միացումներ:
75. «Շամբ» ՀԷԿ - «Շամբ ջրամբար» օպտիկական ինքնակիր մալուխ ոչ մետաղական (ՕՄԻՄ (ADSS)) մալուխի թ49 հենարանից օպտիկական մալուխի միացումներ:
76. «Շամբ» ՀԷԿ 220 կՎ ՕԳ-ի թ69 հենարանի միացման տուփից օպտիկական մալուխի միացումներ:
77. «Գետափ» 220 կՎ ՕԳ-ի թ49 հենարանի վրա տեղադրված միացման օպտիկական մալուխի միացումներ:
78. «Քանաքեռ» ՀԷԿ-ի ՕԿԱ-ի կապուղու վնասվածքի վերացում:
79. «Արգել» ՀԷԿ-ի ՕԿԱ-ի կապուղու վնասվածքի վերացում:
80. «Գյումրի-2» ե/կ-ում «Անի» 220 կՎ ՕԳ-ի օպտիկական բաժանարարից օպտիկական կապուղու ապահովում:
81. «Անի» 220 կՎ ՕԳ-ի թ110 հենարանի վրա տեղադրված օպտիկական միացման տուփից օպտիկական մալուխի միացումներ:
82. «Գյումրի» 220 կՎ ՕԳ-ի թ17 հենարանի վրա տեղադրված օպտիկական միացման տուփից օպտիկական մալուխի միացումներ:
83. «Վանաձոր-2» ե/կ-ում «Գյումրի» 220 կՎ ՕԳ-ի օպտիկական միացման տուփից օպտիկական մալուխի միացումներ:
84. «Աշնակ» ե/կ-ում «Աշնակ» 220կՎ ՕԳ-ի օպտիկական բաժանարարից օպտիկական մալուխի միացումներ:

85. «Աշնակ» 220 կՎ ՕԳ-ի թ33 հենարանի վրա տեղադրված օպտիկական միացման տուփից օպտիկական մալուխի միացումներ:
86. «Վարդենիս» 220 կՎ ՕԳ-ի թ42 հենարանի վրա տեղադրված օպտիկական միացման տուփից օպտիկական մալուխի միացումներ:
87. «Հրազդան» ՋԷԿ-ում «ՊՇԷԿ-1,2» 220 կՎ ՕԳ-ի օպտիկական բաժանարարից օպտիկական մալուխի միացումներ:
88. «Հրազդան» ՀԷԿ-ում «ՊՇԷԿ-1,2» 220 կՎ ՕԳ-ի օպտիկական բաժանարարից օպտիկական մալուխի միացումներ:
89. «Արգել» ՀԷԿ-ում «Առինջ», «Հրազդան» 110կՎ ՕԳ-ների օպտիկական բաժանարարից օպտիկական մալուխի միացումներ:
90. «Առինջ» - «Հրազդան» 110 կՎ ՕԳ-ների թ90 հենարանի վրա տեղադրված օպտիկական միացման տուփից օպտիկական մալուխի միացումներ:
91. «Լիճք» Ե/Կ-ում օպտիկական բաժանարարի տեղադրում, օպտիկական մալուխի միացումներ դեպի «Կամո» Ե/Կ:
92. «Կամո» Ե/Կ-ում օպտիկական միջանկյալ միակցիչով օպտիկական կապուղու ապահովում դեպի «Հրազդան» ՋԷԿ:
93. «Շամբ» 220 կՎ ՕԳ-ի թ34 հենարանի վրա տեղադրված օպտիկական միացման տուփից օպտիկական մալուխի միացումներ:
94. «Արարատ -2» 110 կՎ ՕԳ-ի թ34 հենարանի վրա տեղադրված օպտիկական միացման տուփից օպտիկական մալուխի միացումներ:
95. «ՀԱԷԿ» ՓԲԸ-ում օպտիկական միջանկյալ միակցիչով օպտիկական մալուխի միացումներ:

Կենտրոնական ծառայություն

1. «Հրազդան» ՀԷԿ-ում լարման տատանումի հետևանքով ԱՀԿ-ի խափանված ծրագրի վերականգնում:
2. «Ագարակ» Ե/Կ-ում օպտիկական վերջնամասային սարքավորման (OLTE) ETHER-100 մոդուլի պորտերի ավելացում:
3. «Կամո» Ե/Կ-ում ԲՀԿ թվային սարքավորման հզորության ուժեղարարի ելքային տրանզիստորների փոխարինում:
4. «Հրազդան» ՋԷԿ-ում օպտիկական վերջնամասային սարքավորման (OLTE) օպտիկական թվային հաղորդիչ/ընդունիչի (SFP) փոխարինում:
5. «Գյումրի-2» Ե/Կ-ում անցողիկ ռեժիմների մոնիտորինգի համակարգի (WAMS) ինտեգրում Սինքրոն Թվային Հիերարխիայի սարքավորման (SDH) հետ:
6. «Ալավերդի» Ե/Կ-ում անցողիկ ռեժիմների մոնիտորինգի համակարգի (WAMS) ինտեգրում Սինքրոն Թվային Հիերարխիայի սարքավորման (SDH) հետ:
7. «Վանաձոր-2» Ե/Կ-ում անցողիկ ռեժիմների մոնիտորինգի համակարգի (WAMS) ինտեգրում Սինքրոն Թվային Հիերարխիայի սարքավորման (SDH) հետ:
8. «Քանաքեռ» ՀԷԿ-ում օպտիկական վերջնամասային սարքավորման (OLTE) սնուցման աղբյուրի վերանորոգում:
9. «Հրազդան» ՀԷԿ - բաց բաշխիչ սարքվածքում (ԲԲՍ) տեղադրված ԲՀԿ թվային սարքավորման մակարդակի կարգավորում:
10. «Վանաձոր -2» Ե/Կ-ում ԱՀԿ-ի ծրագրի վերականգնում:

11. «Ջովունի» ե/կ-ում անցողիկ ռեժիմների մոնիտորինգի համակարգի (WAMS) ինտեգրում Սինքրոն Թվային Հիերարխիայի սարքավորման (SDH) հետ:
12. «Հրազդան» ՀԷԿ-ում անցողիկ ռեժիմների մոնիտորինգի համակարգի (WAMS) ինտեգրում Սինքրոն Թվային Հիերարխիայի սարքավորման (SDH) հետ:
13. «Արգել» ՀԷԿ-ում անցողիկ ռեժիմների մոնիտորինգի համակարգի (WAMS) ինտեգրում Սինքրոն Թվային Հիերարխիայի սարքավորման (SDH) հետ:
14. «Հրազդան» ԶԷԿ-ում անցողիկ ռեժիմների մոնիտորինգի համակարգի (WAMS) ինտեգրում Սինքրոն Թվային Հիերարխիայի սարքավորման (SDH) հետ:
15. «Եղեգնաձոր» ե/կ-ում ԲՀԿ սարքավորման սնուցման աղբյուրի վերանորոգում:
16. «Շամբ» ՀԷԿ-ում անցողիկ ռեժիմների մոնիտորինգի համակարգի (WAMS) ինտեգրում Սինքրոն Թվային Հիերարխիայի սարքավորման (SDH) հետ:
17. «Տաթև» ՀԷԿ-ում անցողիկ ռեժիմների մոնիտորինգի համակարգի (WAMS) ինտեգրում Սինքրոն Թվային Հիերարխիայի սարքավորման (SDH) հետ:
18. «Սպանդարյան» ՀԷԿ-ում անցողիկ ռեժիմների մոնիտորինգի համակարգի (WAMS) ինտեգրում Սինքրոն Թվային Հիերարխիայի սարքավորման (SDH) հետ:
19. «Ագարակ» ե/կ-ում անցողիկ ռեժիմների մոնիտորինգի համակարգի (WAMS) ինտեգրում Սինքրոն Թվային Հիերարխիայի սարքավորման (SDH) հետ:
20. «Արարատ -2» ե/կ-ում ԲՀԿ սարքավորման վերածրագրավորում:
21. «Հրազդան -5» ԶԷԿ-ում Սինքրոն Թվային Հիերարխիայի սարքավորման (SDH) համակարգի բարձր և միջին մակարդակների մալուխի (CBW) նորոգում:
22. «Գյումրի-2» ե/կ-ում ԱՀԿ-ի ծրագրի վերականգնում:
23. «Կամո» ե/կ-ում անցողիկ ռեժիմների մոնիտորինգի համակարգի (WAMS) ինտեգրում Սինքրոն Թվային Հիերարխիայի սարքավորման (SDH) հետ:
24. «Լիճք» ե/կ-ում անցողիկ ռեժիմների մոնիտորինգի համակարգի (WAMS) ինտեգրում Սինքրոն Թվային Հիերարխիայի սարքավորման (SDH) հետ:
25. «Արգել» ՀԷԿ-ում լարման տատանումի հետևանքով ԱՀԿ-ի խափանված ծրագրի վերականգնում:
26. «Հրազդան» ԶԷԿ-ում օպտիկական վերջնամասային սարքավորման (OLTE) ընդունիչ/հաղորդիչ մոդուլի մաքրում և մակարդակների կարգաբերում:
27. «Արարատ -2» ե/կ-ում օպտիկական վերջնամասային սարքավորման (OLTE) ընդունիչ/հաղորդիչ մոդուլի մաքրում և մակարդակների կարգաբերում:
28. «Հրազդան» ԶԷԿ-ում օպտիկական վերջնամասային սարքավորման (OLTE) ընդունիչ/հաղորդիչ մոդուլի մաքրում և մակարդակների կարգաբերում և սերվիս մոդուլի փոխարինում:
29. «Երևան» ՀԷԿ-ում օպտիկական վերջնամասային սարքավորման (OLTE) ընդունիչ/հաղորդիչ մոդուլի փոխարինում:
30. «Արարատ-2» ե/կ-ում անցողիկ ռեժիմների մոնիտորինգի համակարգի (WAMS) ինտեգրում Սինքրոն Թվային Հիերարխիայի սարքավորման (SDH) հետ:
31. «Վանաձոր-2» ե/կ-ում օպտիկական վերջնամասային սարքավորման (OLTE) ETHER-100 մոդուլի փոխարինում:
32. «Հրազդան» ՀԷԿ - «Կամո» ե/կ ԲՀԿ կապի վերականգնում:
33. «Շահումյան-2» ե/կ-ում օպտիկական վերջնամասային սարքավորման (OLTE) սնուցման մոդուլի փոխարինում:
34. «Արգել» ՀԷԿ-ում օպտիկական վերջնամասային սարքավորման (OLTE) ETHER-100 մոդուլի փոխարինում:

35. «Շահումյան-2» ե/կ-ում օպտիկական վերջնամասային սարքավորման (OLTE) ընդունիչ/հաղորդիչ մոդուլի փոխարինում:
36. «Լիճք» ե/կ-ում օպտիկական վերջնամասային սարքավորման (OLTE) ընդունիչ/հաղորդիչ մոդուլի փոխարինում:
37. «Վանաձոր-2» ե/կ-ում օպտիկական վերջնամասային սարքավորման (OLTE) ETHER-100 մոդուլի պորտերի ավելացում :
38. «Եղեգնաձոր» ե/կ - «Սպանդարյան» ՀԷԿ կապուղու վերականգնում:
39. «Շահումյան-2» ե/կ-ում օպտիկական վերջնամասային սարքավորման (OLTE) STM-1 մոդուլի փոխարինում:

Ռադիո ծառայություն

1. «Հրազդան» ՀԷԿ-ում և «Լիճք» ե/կ-ում ցանցային կոմուտատորի (Edge-core) և թվային սարքի (mediatrix) ծրագրային թարմացում, կարգավորում: Բաց բաշխիչ սարքվածքում (ԲԲՍ)-ի JR-101 տիպի հեռախոսների նորոգում:
2. «Արգել» ջրամբարի թվային սարքի (mediatrix) և JR-211 տիպի հեռախոսի նորոգում և կարգավորում:
3. «ՀԱԷԿ» ՓԲԸ-ում «Малютка» ռադիոռելեային կայանի հաղորդիչի և ЭПП-1 բլոկի փոխարինում և նորոգում:
4. «Մասիս» էլեկտրացանցի, «Խարբերդ» ե/կ-ի «FM301-160» տիպի ռադիոկայանի նորոգում և ալեհավաքի կարգաբերում:
5. «Հաղթանակ» ե/կ-ում թվային սարքի (mediatrix) և բաց բաշխիչ սարքվածքում (ԲԲՍ)-ի JR-101 տիպի հեռախոսի նորոգում և ցանցային մալուխի (UTP) փոխարինում:
6. «ԲԷՏ» ՓԲԸ ադմինիստրատիվ շենքում, «Շահումյան-2» ե/կ-ում 2հատ CP-200 հեռախոսի ցանցային կոմուտատորի (Edge-core) ծրագրային թարմացում, կարգավորում:
7. «Զովունի» ե/կ-ում ցանցային կոմուտատորի (Edge-core) ծրագրային թարմացում, CP-200 հեռախոսի նորոգում և կարգաբերում:
8. «Արգել» ՀԷԿ-ում ԲԲՍ-ի հեռախոսի նորոգում և թվային սարքի (mediatrix), սնուցման մոդուլի (220/12 Վ) փոխարինում:
9. «Վեդի» էլեկտրացանցում, «Գոռավան» ե/կ-ում և «Խոր Վիրապ» ե/կ-ում «FM301-160» ռադիոկայանների հաղորդիչի և սնուցման մոդուլի (220/12 Վ) նորոգում:
10. «Երևան» ԶԷԿ-ում, բաց բաշխիչ սարքվածքում (ԲԲՍ)-ում, CP-200 հեռախոսի նորոգում, ցանցային կոմուտատորի (Edge-core) ծրագրային թարմացում:
11. «Մարաշ» ե/կ-ում թվային սարքի (mediatrix) նորոգում և ցանցային մալուխի (UTP) փոխարինում:
12. «Ագարակ» ե/կ-ում թվային սարքի (mediatrix) և JR-101 տիպի հեռախոսի նորոգում, «Անգեղակոթ» ջրամբարում «air-fiber 5x» ռադիոկայանի նորոգում և 150 մ ցանցային մալուխի (UTP) փոխարինում ինքնակիր ոչ մետաղական օպտիկական մալուխ-ով (OPAC):
13. «Արտաշատ» և «Մխչյան-2» ե/կ-ներում «FM301-160» ռադիոկայանի նորոգում և ալեհավաքի կարգաբերում:
14. «Հրազդան» ԶԷԿ-ում ցանցային կոմուտատորի (Edge-core) ծրագրային թարմացում, CP-400 հեռախոսի նորոգում:

15. Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (ՀԾԿՀ) հին շենքում CP-200 հեռախոսների և ցանցային կոմուտատորների (SWICH) ապամոնտաժում:
16. «Մասիս» ե/կ-ում «FM301-160» ռադիոկայանի նորոգում, վնասված ավեհավաքի ապամոնտաժում և նոր ավեհավաքի մոնտաժում:
17. «Մխչյան-1» և «Հովտաշատ» ե/կ-ներում «FM 301-160» ռադիոկայանների ղեկավարման վահանակի և հաղորդիչի նորոգում:
18. «Արգել» ՀԷԿ-ի ՕԿԱ-ում JR-211 հեռախոսի նորոգում, ցանցային կոմուտատորի (Edge-core) վերածրագրավորում:
19. «Նուբարաշեն» ե/կ-ում «FM301-160» ռադիոկայանի հաղորդիչի նորոգում և կարգավորում:
20. «Երևան» ՀԷԿ-ում CP-200 թվային հեռախոսի նորոգում թվային սարքի (mediatrix) կարգաբերում, ԲԲՄ-ի JR-101 տիպի հեռախոսի կարգավորում:
21. «ՄԷԿ» ՓԲԸ վարչական շենքում (Լուսակերտ գյուղում) թվային սարքի (mediatrix) նորոգում, հեռախոսի նորոգում և օպտիկա էդերնետային փոխակերպիչի (կոնվերտոր) սարքի նորոգում:
22. «Հրազդան» ԶԷԿ-ում օպտիկա էդերնետային փոխակերպիչի (կոնվերտոր) տեղադրում և միացում:
23. Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (ՀԾԿՀ) նոր շենքում 200 մ ցանցային մալուխի (UTP) մոնտաժ, 2հատ SNR1000-8T ցանցային կոմուտատորի մոնտաժ և միացում:
24. Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (ՀԾԿՀ) նոր շենքում 230 մ ցանցային մալուխի (UTP) մոնտաժ, 10հատ CP-200 թվային հեռախոսի մոնտաժում:
25. Պահուստային կարգավարական կետում (ՊԿԿ) CP-600 հեռախոսի նորոգում, ցանցային կոմուտատորի (Edge-core) վերածրագրավորում:
26. «Սևան» ՀԷԿ-ի հերթափոխի պետի CP-400 հեռախոսի նորոգում, ցանցային կոմուտատորի ծրագրային թարմացում և կարգվորում:
27. Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (ՀԾԿՀ) նոր շենքում ցանցային կոմուտատորի (Edge-core) տեղադրում և կարգաբերում:
28. «ՀԱԷԿ» ՓԲԸ - «Սև ջուր» ե/կ-ում «Малютка» ռադիոռելեային կայանների նորոգում, նորոգվել են 2հատ սնող սարք 220/12 Վ, 1հատ АБК-ЦГ-3 և 1հատ ГОЧ-5 սարքեր:
29. «Աշնակ» ե/կ-ում թվային սարքի (mediatrix) նորոգում և ծրագրային թարմացում, ցանցային մալուխի (UTP) փոխարինում, JR-101 հեռախոսի նորոգում:
30. «ՀԷՑ» ՓԲԸ «Արաքս» մ/ճ-ի «Մասիս» էլեկտրացանցում, «Կապույտ Լիճ» ե/կ-ում և «Արաքս» մ/ճ-ի օպերատիվ կապի ապահովող «FM301-160» տիպի ռադիոկայանների նորոգում, նորոգվել է 2հատ ընդունիչ և 1հատ ղեկավարման վահան:
31. «Հաղթանակ» ե/կ-ում CP-200 թվային հեռախոսի նորոգում, թվային սարքի (mediatrix) նորոգում:
32. «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի ԿՂՎ-ում (mediatrix) սարքի նորոգում, 48-220Վ սնող սարքի փոխարինում և CP-200 հեռախոսի կարգաբերում, ցանցային կոմուտատորի (Edge-core) ծրագրային թարմացում:
33. «ՀՇԳՑ»-ում 3հատ CP-200 հեռախոսի նորոգում և կարգաբերում, ցանցային կոմուտատորի (Edge-core) վերածրագրավորում:
34. «Ձովունի» ե/կ-ում 200մ ինքնակիր ոչ մետաղական օպտիկական մալուխի (OPAC) մոնտաժ, «air-fiber 5x» ռադիոկայանի ավեհավաքի մոնտաժ և կարգաբերում:

35. «Ձովունի» ե/կ-ում 150 մ ցանցային մալուխի (UTP) մոնտաժում բաց բաշխիչ սարքվածքում (ԲԲՍ) 220 կՎ-ում, տեղադրվել է JR-101 տիպի հեռախոս:
36. «Արգել» ջրամբարում ցանցային կոմուտատորի (Edge-core) և JR-211 տիպի հեռախոսի նորոգում:
37. «Ձովունի» ե/կ-ի նոր շենքում մոնտաժվել է 120 մ ցանցային մալուխ (UTP) և միացվել է 2հատ CP-200 թվային հեռախոս:
38. «Շահումյան-2» ե/կ-ում փոխարինվել է ցանցային մալուխը (UTP), նորոգվել է բաց բաշխիչ սարքվածքում (ԲԲՍ) 220 կՎ-ի JR-101 տիպի հեռախոս:
39. «Արմափաուեր»-ում CP-400 հեռախոսի նորոգում, SNR1000-8T ցանցային կոմուտատորի փոխարինում:
40. «Մխչյան-2» ե/կ-ում, «Նուբարաշեն» ե/կ-ում «FM301-160» ռադիոկայանների նորոգում, ալեհավաքների կարգաբերում:
41. ՀԱԻՆ – «ՀԱԷԿ» ՓԲԸ աշխատող «Малютка» ռադիոռելեային կայանի նորոգում, նորոգվել է 1հատ հաղորդիչ, 1հատ սնող սարք 220/12 Վ:
42. «Երևան» ՋԷԿ – ՀՇԳՑ - բաց բաշխիչ սարքվածքում (ԲԲՍ) ցանցային կոմուտատորի (Edge-core) նորոգում, ծրագրային թարմացում, 2հատ CP-200 թվային հեռախոսի նորոգում:
43. «Սպանդարյան» ՀԷԿ Անգեղակոթ ջրամբար, «air-fiber 5x» ռադիոկայանների նորոգում, ալեհավաքների կարգավորում, ցանցային կոմուտատորի (Edge-core) ծրագրային թարմացում:
44. ՀՀ կառավարական 3-րդ մասնաշենքում թվային կապի սարքի (mediatrix) նորոգում և կարգաբերում:
45. «Քանաքեռ» ՀԷԿ - «Մարաշ» ե/կ-ում ցանցային կոմուտատորի (Edge-core) թարմացում, CP-400 հեռախոսի նորոգում, բաց բաշխիչ սարքվածքում (ԲԲՍ) 220 կՎ-ում JR-101 հեռախոսի նորոգում:
46. «ՀԷՑ» ՓԲԸ ադմինիստրատիվ շենքում ցանցային կոմուտատորի (Edge-core) ծրագրային թարմացում, 2հատ CP-200 հեռախոսի նորոգում:
47. «Ձովունի» ե/կ-ում բաց բաշխիչ սարքվածքում (ԲԲՍ) 110 կՎ-ում 130 մ ցանցային մալուխի (UTP) մոնտաժ և JR-101 տիպի հեռախոսի տեղադրում:
48. «ՀԱԷԿ» ՓԲԸ «Պոռոդ» ե/կ-ի «Малютка» ռադիոռելեային կայանների սնող սարքի 220/12 Վ և БСР-5 բլոկի նորոգում:
49. «Լիճք» և «Գավառ» ե/կ-ներում ցանցային կոմուտատորի (Edge-core) ծրագրային թարմացում, CP-200 թվային հեռախոսի նորոգում, թվային սարքի (mediatrix) կարգաբերում:
50. «ՄԷԿ» ՓԲԸ ադմինիստրատիվ շենքում ցանցային կոմուտատորի (Edge-core) նորոգում, CP-200 հեռախոսի նորոգում:
51. «Երևան» ՀԷԿ-ի պատվարում «air-fiber 5x» ռադիոկայանի նորոգում և ալեհավաքի կարգաբերում:
52. «Ախպարա» ջրամբարում ցանցային կոմուտատորի (Edge-core) նորոգում և CP-200 հեռախոսի վերածրագրավորում:
53. «Քանաքեռ» ՀԷԿ-ի ՕԿԱ-ում ցանցային մալուխի (UTP) փոխարինում և JR 211 տիպի հեռախոսի նորոգում:

Կապի համակարգի սարքավորումների էլեկտրական սնուցման սպասարկման ծառայություն

1. «Լիճք» ե/կ-ում կապի վերջնամասային սարքի պահուստային սնուցման ապահովում:
2. «Արզնի» ՀԷԿ-ում կարգավարական հեռախոսի սնուցման ապահովում տեղային հաստատուն 220 Վ հավաքվածքից:
3. «Արարատ-2» ե/կ-ում լիցքավորման ագրեգատի տեղադրում:
4. «Ագարակ» ե/կ-ում շարժիչ-գեներատորի խցիկի տեղափոխում:
5. «Լիճք» ե/կ-ում լիցքավորման ագրեգատի GMP-3,48 բլոկի նորոգում:
6. «Հրազդան» ՀԷԿ-ում կարգավարական հեռախոսի միացում 220 Վ հաստատուն հոսանքի հավաքվածքին:
7. «Շահումյան-2» ե/կ-ում ցանցային կոմուտատորի սնուցման մոդուլի վերականգնում:
8. «Վանաձոր-2» ե/կ-ում ԲՀԿ SV1 բլոկի նորոգում:
9. «Շահումյան-2» ե/կ-ում լիցքավորման ագրեգատի GMP-3,48 բլոկի փոխարինում:
10. «Արարատ-2» ե/կ-ում բարձր հաճախականային սարքի էլեկտրական սնուցման միացում:
11. «Երևան» ՀԷԿ-ի անխափան սնուցման սարքի (UPS) նորոգում:
12. «Արգել» ՀԷԿ-ում կարգավարական հեռախոսի միացում 220 Վ հաստատուն հոսանքի հավաքվածքին:
13. «Աշնակ» ե/կ-ում 48/220 Վ փոխարկիչի նորոգում:
14. «Մարաշ» ե/կ-ում 48 Վ մարտկոցների լիցքավորիչի նորոգում:
15. «ՀԱԷԿ» ՓԲԸ -ի 48/220 Վ փոխարկիչի նորոգում:
16. «Երևան» ԶԷԿ-ում կապի վերջնամասային սարքի միացում լիցքավորման ագրեգատի 48 Վ-ից:
17. «Զովունի» ե/կ-ում կապի վերջնամասային սարքի միացում պահուստային 48 Վ լարմանը:
18. «Քանաքեռ» ՀԷԿ-ի կարգավարական հեռախոսի միացում 220 Վ հաստատուն հոսանքի հավաքվածքին:
19. N1264 ե/կ-ի պահուստային ավտոմատ միացման (ABP) սարքի նորոգում:
20. «Արգել» ՀԷԿ-ում 220/48 Վ փոխարկիչի նորոգում:
21. «Հաղթանակ» ե/կ-ում 220 Վ փոփոխական հոսանքի միացումը կապի սարքավորումների արկղում:
22. «Մարաշ» ե/կ-ի 48 Վ մարտկոցների լիցքավորիչի նորոգում:
23. «Արարատ-2» ե/կ-ում հեռուստամեխանիկայի սարքի և տրանսյուսերների (PM-130) միացում լիցքավորման ագրեգատի 48 Վ լարումից «Վանաձոր-2» ե/կ-ում բարձր հաճախականային սարքի (PLC) 48/5 Վ բլոկի նորոգում:
24. «Սպանդարյան» ՀԷԿ-ում լիցքավորման ագրեգատի 48 Վ լիցքավորիչի նորոգում:
25. «Արգել» ՀԷԿ-ի կարգավարական հեռախոսի միացում 220 Վ հաստատուն հոսանքի հավաքվածքից:
26. «Եղեգնաձոր» ե/կ-ում 48 Վ լիցքավորիչի նորոգում:
27. «Քանաքեռ» ՀԷԿ օրական կարգավորման ավազանի (ՕԿԱ) անխափան սնուցման սարքի նորոգում:
28. «Կամո» ե/կ-ում կապի վերջնամասային սարքի սնուցման ավտոմատ անջատիչի փոխարինում:
29. «Էներգակապ» մ/ճ-ում 48 Վ մարտկոցների լիցքավորիչի նորոգում:
30. «Վանաձոր-2» ե/կ-ի անխափան սնուցման սարքի նորոգում:
31. «Կամո» ե/կ-ում շարժիչ-գեներատորի նորոգում:

32. «Աշնակ» ե/կ-ում լիցքավորման ագրեգատի GMP-3,48 բլոկի նորոգում և կարգավորում:
33. «Արգել» ջրամբարի անխափան սնուցման սարքի մարտկոցների փոխարինում:
34. «Արգել» ՀԷԿ-ի օրական կարգավորման ավազան (ՕԿԱ) անխափան սնուցման սարքի մարտկոցների փոխարինում:
35. «Շինուհայր» ե/կ-ի բարձր հաճախականային սարքի 220 Վ փոփոխական հոսանքի սնուցման մոդուլի վերանորոգում:
36. «Էներգակապ» մ/ճ-ի ջեռուցման համակարգի կաթսայի կարգավորիչի նորոգում:
37. «Մարաշ» ե/կ GMP-3,48 բլոկի վերանորոգում:
38. «Սևան» ՀԷԿ-ի անխափան սնուցման սարքի վերանորոգում:
39. «Արզնի» ՀԷԿ-ի 220 Վ-ից 48 Վ փոխարկիչի վերանորոգում:
40. «Արարատ 2» ե/կ բարձր հաճախականային սարքի 220/48 Վ սնուցման մոդուլի նորոգում:
41. «Հրազդան» ՋԷԿ-ի ոչ բլոկային մասի հեռախոսի միացումը 220 Վ հաստատուն հոսանքի հավաքվածքից:
42. «Շահումյան» ե/կ-ում 48/220 Վ փոխարկիչի վերանորոգում:
43. N1264 ե/կ-ում էլեկտրական թողարկիչի փոխարինում:
44. «Հրազդան» ՋԷԿ բաց բաշխիչ սարքվածքում (ԲԲՍ) 48/220 Վ փոխարկիչի վերանորոգում:
45. «Վանաձոր-2» ե/կ-ի բարձր հաճախականային սարքի 48Վ սնուցման բլոկի վերանորոգում:

Ավտոտրանսպորտի և մեխանիզացիայի ծառայություն

2025թ. ապահովվել է մեքենաների տեխնիկական սպասարկումն ու վերանորոգումը, պահպանվել է մեքենաների սարքին վիճակը և անխափան շահագործումը:

Կատարվել են նաև սեզոնային և ձմեռային նախապատրաստական աշխատանքներ:

Մասնաճյուղի տեղամասերը՝ «Արևելյան», «Հյուսիսային», «Արևմտյան», «Ձանգեզուրի» պարտաճանաչորեն կատարել են վթարավերականգնողական, պրոֆիլակտիկ աշխատանքները և ակտիվ մասնակցել են մասնաճյուղի ծառայությունների կողմից կատարվող աշխատանքներին:

Համաձայն Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրի (մինչև 2040թ) իրագործումն ապահովող ծրագիր-ժամանակացույցի 9.7 և 11.4 կետերի պահանջի, ինչպես նաև «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲ ընկերության գործունեության արդյունավետ կառավարման, շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության նվազեցման, էներգաարդյունավետության բարձրացման, ռիսկերի նվազեցման,

տեղեկատվական անվտանգության մակարդակի բարձրացման և միջազգային ստանդարտներին համապատասխանեցնելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել 2025թ. իրականացնել ներքոհիշյալ ստանդարտների ներդրման և համապատասխան հավաստագրման ստացման հետևյալ գործառույթները.

1. ISO 9001:2015 - Որակի Կառավարման համակարգեր (ներդրում և սերտիֆիկացում),
2. ISO 14001:2016 - Շրջակա միջավայրի կառավարում (ներդրում և սերտիֆիկացում),
3. ISO 50001:2023 - Էներգետիկական համակարգի կառավարում (ներդրում և սերտիֆիկացում),
4. ISO 27001:2022 - Տեղեկատվության անվտանգություն, կիրառական անվտանգություն և անհատական տվյալների պաշտպանություն՝ տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգեր - պահանջներ (ներդրում և սերտիֆիկացում),
5. ISO 37001:2016 - Կոռուպցիայի դեմ հակազդեցության կառավարման համակարգեր-պահանջներ և երաշխավորություններ կիրառման վերաբերյալ (ներդրում և սերտիֆիկացում),

«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲ ընկերության ISO 9001:2015, ISO 14001:L2016, ISO 50001:2023, ISO 27001:2022, ISO 37001:2016, ստանդարտների ներդրման և միջազգային սերտիֆիկացման ծառայությունների ձեռքբերման նպատակով պետական գնումների շրջանակում մրցույթ է իրականացվել, որի արդյունքում հաղթող է ճանաչվել «Բիզնեսին ընդառաջ» Որակի Կենտրոն ՍՊ ընկերությունը:

«Բիզնեսին ընդառաջ» Որակի Կենտրոն ՍՊ ընկերությունն իր սերտիֆիկատը ստացել է GLOBAL CERTIFICATION LIMITED (ակրեդիտացված UKAS կողմից) ընկերության կողմից:

Մրցույթի առարկա ստանդարտների ներդրման սկզբունքների և ընթացակարգերի համաձայն՝ մրցույթի հաղթող ընկերությունը իրականացրել է ստորև բերված համապատասխան գործառույթները.

- **Նախնական աուդիտի իրականացում, որի ընթացքում պետք է գնահատվեն հիմնական չափանիշները և ցուցանիշները, սահմանվեն նպատակներն ու խնդիրները, ներդրման համար անհրաժեշտ գործողությունների դասակարգում և ներդրման պլանի կազմում,**
- **Ընկերության գործունեության վերլուծություն և գործընթացների ստանդարտի պահանջներին համապատասխանության գնահատում,**
- **Ստանդարտի փաստաթղթավորում՝ համապատասխան ձեռնարկ և ընթացակարգեր, որոնք նկարագրում են գործընթացները, փաստաթղթերը և ձևաթերթերը: Այդ փաստաթղթերը ստեղծելիս անպայման ներգրավել ընկերության համապատասխան աշխատակիցների, որպեսզի ստեղծված փաստաթղթերը և ձևաթերթերը համապատասխանեն ընկերության համար վերադաս մարմինների կողմից հաստատված ձևաչափերին, չբարդացնեն**

աշխատանքը, բայց միևնույն ժամանակ համապատասխանեն ստանդարտի պահանջներին,

- Ընկերության ղեկավարության և աշխատակիցների համար ստանդարտի ներդրման սկզբունքների և դրույթների պահպանման և թարմացման վերաբերյալ ուսուցման իրականացում՝ ստանդարտի գործարկման համար,
- մշակված գործողությունների ծրագրի իրականացում և **կազմակերպության գործունեության հետ կապված բոլոր ռիսկերի բացահայտում,**
- ներքին աուդիտորների ուսուցում՝ ամենամյա ներքին աուդիտ կազմակերպելու և համակարգը աշխատանքային վիճակում պահելու համար (հնարավորության դեպքում անհատական «Փորձագետ աուդիտորի» վկայականների տրամադրում),
- **ներքին աուդիտի իրականացում, դիտարկումների և անհամապատասխանությունների վերաբերյալ հաշվետվությունների պատրաստում՝ ստանդարտի սկզբունքներին համապատասխան,**
- **ներդրված և գործող կառավարման համակարգի ամբողջ ցիկլի ապահովում՝ բոլոր գործընթացների, ղեկավարության վերանայումների, աուդիտների և ներքին աուդիտից բխող գործողությունների արձանագրումներ,**
- սերտիֆիկատի հանձնում, 3 տարի ժամկետով,
- խորհրդատվություն կազմակերպությանը ստանդարտի ներդրումը 1 տարի գործողության մեջ պահպանելու ընթացքում:

III. ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

1. Եկամուտներ և ծախսեր (առանց ԱԱՀ)

1.1. Եկամուտներ (առանց ԱԱՀ)

Ընկերության 2025թ. տարեկան ընդհանուր եկամուտը կազմել է **2,455.3 մլն դրամ**՝ նախատեսված **2,245.69 մլն դրամի** դիմաց (հավելված 1): Նշված ցուցանիշը ձևավորվել է գործառնական (**2,256.8 մլն դրամ**) և ոչ գործառնական (**198.4 մլն դրամ**) եկամուտների հանրագումարից:

Հիմնական գործունեությունից ստացված եկամուտը կազմել է **2,014.5 մլն դրամ**՝ խորհրդի կողմից հաստատված նախահաշվով նախատեսված **1,943.42 մլն դրամի** դիմաց: Նախատեսվածից **71.1 մլն դրամով** ավել եկամուտը հիմնականում պայմանավորված է ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տարեկան էլեկտրաէներգիայի հաշվեկշռում էլեկտրաէներգիայի քանակի պակաս պլանավորմամբ, որի արդյունքում փաստացի մատուցված ծառայությունների ծավալը գերազանցել է կանխատեսված ցուցանիշները: Նշված եկամուտի գոյացման աղբյուրներն են.

- **1,673.4 մլն դրամը** ՀՀ տարածքում մատուցած ծառայությունների դիմաց (վճարող «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ՝ **1,096.92 մլն դրամ** և շուկայի մասնակից որակավորված սպառողներ՝ **576.46 մլն դրամ**):
- **Արտահանման ընթացքում** մատուցված ծառայությունների հանրագումարը կազմել է **341.15 մլն դրամ**:
- **Այլ գործունեությունից ստացված գործառնական լրացուցիչ եկամուտը** կազմել է **242.3 մլն դրամ**, որը գրեթե ամբողջությամբ համապատասխանում է նախահաշվային ցուցանիշին (**242.27 մլն դրամ**): Նշված եկամուտի գոյացման աղբյուրները հետևյալն են.
- Աբովյան 27 շենքի տարածքի վարձակալությունից՝ **43.0 մլն դրամ**,
- Օպտիկամալուխային գծերի վարձակալությունից՝ **196.0 մլն դրամ**,
- «ԷԷՀՕ» ՓԲ ընկերության էլեկտրատեղակայանքներով այլ սպառողներին (ենթասպառողներին) «ՀԷՑ» ՓԲ ընկերության կողմից էլեկտրաէներգիա

հաղորդելու համար փոխհատուցումից ստացված եկամուտը կազմել է՝ **0.6 մլն դրամ**,

- «ԲԷՑ» ՓԲ ընկերությանը մատուցած լրացուցիչ ծառայությունների և հաղորդման ցանցին հզորության միացման տեխնիկական պայմանների տրամադրման համար՝ **2.7 մլն դրամ**:

Ընկերության գործառնական եկամուտները կազմել են 2,256.8 մլն դրամ:

